<<Քայլ առ քայլ >> բարեգործական հիմնադրամ

<<Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման>> ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ **էքսկուրսիաների և մշակութային այցերի դերը սաների զարգացման գործում**

Դաստիարակ՝ **Վերա Սիմոնյան**

Մանկապարտեզ՝<<Մեղրի համայնքի մանկապարտեզ >> ՀՈԱԿ

2023թ.

Բովանդակություն

Ներածություն.....3

Ինչու եմ ընտրել այս թեման..... 5

Գլուխ 1.....9

Էքսկուրսիան և նրա կարևերությունը

Գլուխ 2.....12

Էքսկուրսիաներ և մշակութային այցերի դերը սաների զարգացման գործում

Հետազոտական աշխատանք՝- Մշակութային այց - Մանկական գրադարան.....14

Եզրակացություն…….....22

Գրականություն.....23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մշակույթ, կուլտուրա լատիներեն բառ է, նշանակում է մշակում, դաստիարակում: Այն ձևավորում է հասարակության և մարդու որոշակի մակարդակ: Մշակույթը այն ամենն է ինչ շրջապատում է մարդուն և հասարակությանը:Մշակույթը պահպանում է ազգը, պետությունը, թույլ չի տալիս ձուլվել ուրիշ ազգերի, տարբերվում է մյուս ազգերից: Մեզ ճանաչում են նաև մեր մշակույթի շնորհիվ:

" Մշակույթը այն է , ինչ մնում է,երբ ամեն ինչ մոռացված է" Էրի(ֆրանսիացի քաղաքական գործիչ, գիտնական):

Պետք է պահպանել այն, ինչ եկել է մեզ դարերից, ստեղծել նորը և փոխանցել սերունդներին:

Էքսկուրսիա բառը լատիներեն նշանակում է կոլեկտիվ ուղևորություն' գիտական, կրթական նպատակով:

Էքսկուրսիան մեթոդ է, որը անբաժան է նախադպրոցականի բոլոր փուլերում և ունի զարգացման, կրթական, դաստիարակչական նպատակներ: Էքսկուրսիաների և մշակութային այցերի շնորհիվ երեխային փոխանցվում է գեղագիտական բովանդակությամբ մեծ տեղեկատվություն' արվեստի, նրա տարբեր տեսակների, ժանրերի, տեսարժան վայրերի, գրադարանների, մանկական պատկերասրահների, պատմամշակութային կոթողների , հայրենի բնաշխարհի, ազգային ավանդույթների վերաբերյալ:

Մշակույթի դերը երեխայի ընդհանուր զարգացման, աշխարհայացքի ձևավորման, մտահորիզոնի ընդլայման, տրամաբանական մտածողության գործում մեծ դեր է խաղում:Զարգանում է երեխայի ուշադրությունը, դիտողականությունը, մտածողությունը, նաև խոսքը:

Հայ նշանավոր մանկավարժ Ա. Բահաթրյանն ասում էր" Ուսուցման մեջ առաջինը և կարևորը դիտողականությունն է, երեխայի առաջին դիտողությունները վարժեցնում են նրա զգայարանները, իսկ զգայարանները այն դուռն է, որով արտաքինը մտնում,

թափանցում է ներքին աշխարհ։ Ինչ- որ չի անցնում զգայարաններով , նա առհասարակ չի մտնում հոգու մեջ։Ուստի միշտ ուսուցման պրոցեսում նախ պետք է երևան գա գաղափարը, իսկ հետո' բառը։Միայն այդպես կարելի է մշակել լեզուն, իսկ լեզվով' հոգին ու միտքը"։Էքսկուրսիաների ընթացքում երեխաների մոտ, բարձրանում է կարգապահությունը, կազմակերպվածությունը, ամրապնդվում են վարքային կանոնները։

ԻՆՉՈՒ ԵՄ ԸՆՏՐԵԼ ԱՅՍ ԹԵՄԱՆ

Երեխաների զարգացման գործում մեծ տեղ տալով, կարևորելով էքսկուրսիաների և մշակութային այ երի դերը ընտրեցի այս թեման:
Աշխատանքի ընթացքում օգտագործել եմ ամեն մի հնարավորություն պարապմունքները խմբասենյակից դուրս' մանկապարտեզի տարածքում(այգիներում, ծաղկանոցում, տաղավարում) բնության գրկում, տարբեր վայրերում կազմակերպելու համար:
Էքսկուրսիաները, մշակութային այցերը բազմազան գուներանգներ են, որոնք ավելացնում եմ իմ պարապմունքների թեմաների ներկապնակին:
Մշակութային այցեր ենք կազմակերպել' Հ.Իգիթյանի անվան Գեղագիտության կենտրոնի Մեղրիի մասնաճյուղում : Երեխաների հիացմունքը,զգացողությունները աննկարագրելի էր, երբ դիտեցին մանկական պատկերասրահում իրենց հասակակիցների գործերը:Ծանոթացան նկարչության ժանրերին, ծանոթացան կիրառական արվեստին, գորգագործությանը:Քանի որ նկարչության պարապմունքների ընթացքում հաճախ ենք անդրադարձել բնանկար, նատյուրմորտ, ավելի սակավ դիմանկարին, երեխաները առանց դժվարության մատնանշեցին այդ նկարները:Նրանք ուրախ և տոնական տրամադրությամբ վերադարձան գույների հրաշք աշխարհից:Մի քանի օր նրանք անգամ պարապմունքներում պատմում էին իրենց տպավորությունները,իսկ նկարչության պարապմունքներին փորձում էին օգտագործել ավելի գունեղ, պայծառ գույներ և ստանալ նոր երանգներ:Նրանց մոտ ավելի զարգացավ գունազգացողությունը,գեղեցիկը առանձնացնելու,տեսնելու կարողությունը:
Մշակութային այց ենք կատարել Մեղրիի Սուրբ Հովհաննես եկեղեցի (17-րդ դար) դիտելու Նաղաշ Հովնաթանի դպրոցին պատկանող որմնանկարները, որտեղ կային դրվագներ հայոց պատմությունից: Հայկական և պարսկական ոճերի միախառնումից ստեղծվել էին հետաքրքիր լուծումներով նկարներ:Երեխաներին հիացրեց ոչ միայն որմնանկարները իրենց գունեղությամբ, այլ բուսական և երկրաչափական տարրերով ստեղծված նախշազարդերը, որոնք ասեղնագործություն էին հիշեցնում իրենց նրբությամբ և գույների երանգների հետաքրքիր համադրությամն:

Երեխաները ուշադիր լսում լսում էին, հարցեր էին առաջադրում, որոնք իրենց մեջ ներառում էին նաև հայոց պատմության, Մեղրիի բերդ-ամրոցների(բուրջերի) մասին: Նրանք գիտեին, որ Դավիթ Բեկը մասնակցել է և ղեկավարել թշնամու դեմ մեղրեցիների պայքարը հենց այդ դիտակետ բերդ- ամրոցներից:

Այցելել ենք 18-րդ դարում կառուցված, այժմ արդեն " Արևիք" հյուրատունը,որտեղ ապրել են մեղրեցի ականավոր բժիշկ գիտնական Մ. Մեժլումյանների գերդաստանը:Դա այց էր դեպի Մեղրիի պատմության խորքերը, դեպի մեր արմատները:

Երեխաների ուշադրությունը գրավեց երդիկը, հնամյա տնային իրերը' սնդուկ, կրակով գործածվող արդուկ, պատերի մեջ փորված խորշեր, որոնք պահարան են ծառայել, հնամենի լամպեր,գորգեր, կարպետ, փայտյա բազմոց : Յուրահատուկ ճարտարապետության նմուշ էր կախված փայտյա բաց պատշգամբները, նախշազարդ շրջանակներով կամարաձև լուսամուտները:Ուշադրություն դարձրեցին փայտյա դարպասին' երկաթյա թակիչներով , որը ժամանակին ազդարարել է հյուրերի գալուստը, հացահատիկից ալյուր ստանալու քարե սանդը:

Այդ այցերից հետո երեխաները երկար ժամանակ խոսում էին, պատմում էին իրենց տպավորությունները, հարցնում էին մեղրեցիների կենցաղի, սովորույթների մասին: Շատ կարևոր է հայրենաճանաչությունը վաղ հասակից:Ձևավորվում է սեր հայրենիքի, հայրենի քաղաքի նկատմամբ Պետք է սիրել հայրենիքը, գնահատել ունեցածը, ամուր պահել, պաշտպանել հողը թշնամու ոտնձգություններից:

Այս աշնան ամիսների ընթացքում շատ ենք եղել աշնանային գույներով օծված այգիներում:Այցելել ենք ,երբ տերևները նոր էին ոսկեզօծվել, այցելել ենք, երբ հասունացել են մրգերը, երբ տերևաթափ էր և չորացած տերևները խշշում էին երեխաների ոտքերի տակ:Այդ բոլոր այցերի ընթացքում երեխաները հավաքել են բնական նյութեր(գույնզգույն տերևներ,կոներ) և աշխատել են այդ նյութերով կերպարվեստային պարապմունքների ընթացքում :

Այս օրերին երեխաները մասնակցեցին Մեղրիի վերջին մրգերի բերքահավաքին:Այգեպանի հետ մանկապարտեզի այգիներում արքայանարինջ և սերկևիլ քաղեցին, փոքրիկ զամբյուղներով տեղափոխեցին և խնամքով դասավորեցին արկղերում:

Էքսկուրսիաները հայրենի բնության, շրջապատի,հայրենի եզերքի հանդեպ սեր, հոգատար վերաբերմունք են արթնացնում, ամրակայում երեխաների գիտելիքները, հարգանք դաստիարակում աշխատանքի և այդ աշխատանքը արարողների, տարբեր մասնագիտությունների նկատմամբ: Բնությունը կախարդական ազդեցություն է ունենում երեխայի ներաշխարհի վրա:Երեխան տեսնում, զգում է բնության հարուստ գունախաղերը, արևից շողացող ջրի կաթիլը, թիթեռի թևիկների նախշազարդումը, տերևի

հրաշք գույները և այդ բոլորը տանում է իր հետ, տանում է փորձելով նույնը փոխանցել թղթին, պատմելով փորձում է նույն զգացողությունը փոխանցել մյուսներին:Մի անգամ հանդիպումը գեղեցիկի հետ, այնպես է տպավորվում, որ արդեն նա ամեն երևույթի մեջ, ամեն առարկայի մեջ փնտրում է գեղեցկություն :
Հայ մեծ մանկավարժ Խ. Աբովյանն ասել է " Բնությունն իր բազմապիսի առարկաներով ու երևույթներով, իր պես- պես գույներով ու ձայներով, դրանց միջև եղած պատճառա-հետևանքային զանազան կապերով, իր սքանչելի գեղեկցությամբ ու անկրկնելի ստեղծագործություններով ամենամեծ ուսուցիչն է":Այդ ուսուցիչ-բնությունն է, որ երեխաներին սովորեցնում է ճանաչել բնությունը:Որպես ուսուցման միջոց, շրջապատին, բնությանն, հասարակությանը ճանաչելուն, շրջապատի մասին ռեալ գիտելիքներ հաղորդելուն նպաստում են էքսկուրսիաները, որոնք պետք է լինեն մեր պարապմունքների անհրաժեշտ բաղկացուցիչ մասը:
Մեր ավանդույթներից մեկի' չրագործության հետ ծանոթանալու համար այցելեցինք աշնանային այգի և այգուն կից' չորանոց: Երեխաները ոչ միայն դիտեցին, թե ինչպես են մեծահասակները արքայանարնջից չիր պատրաստում, ինչպիսի աշխատանքներ են կատարում(կախել ամուր թելերով, փափկեցնել և այլն) այլ նաև մասնակցեցին այդ գործընթացին, հետո մասնակցեցին նռան գինի պատրաստելու աշխատանքներին: Երեխաների տոնական տրամադրությունը, ոգևորությունը մինչև հիմա չի լքում նրանց: Տպավորությունները շունչ ու հոգի առան,արտացոլվեցին նրանց նկարներում, որտեղ փորձում էին արդեն թելերից կախված, արևի տակ հուրհրացող արևավառ, կրակագույն արքայանարինջները և աշնանային այգին ներկայացնել հեքիաթային աշնան հարուստ ներկապնակի բոլոր գունաերանգներով:
Ձեռք բերված գիտելիքները երեխաները օգտագործում էին օգտագործել մյուս պարապմունքների ընթացքում, եթե թեման առնչվում էր աշնան հետ:
Այցելությունը Խաչաց տուն' հնամենի թոնրի դիտումը, այնպես ոգևորեց երեխաներին, որ որոշեցինք նորից էքսկուրսիա կազմակերպել, այս անգամ ծնողների հետ, մեր ավանդական թոնրատուն:Այնտեղ երեխաները դիտողի դերում չեն լինի:Մայրիկների հետ միասին խմոր կպատրաստեն,կգրտնակեն և թոնրում լավաշ կթխեն, կզգան դարերից եկող լավաշի բույրը և կվայելեն:
" Հաց" թեման անցնելիս մեր էկոլոգիայի խմբասենյակում, որտեղ կա նաև" Խոհանոց" բաժին, մեր օգնությամբ երեխաները ջեռոցում հաց և թխվածքաբլիթ թխեցին, վայելեցին:Ասացին, որ այդպիսի համեղ հաց չեն կերել:
Քանի որ Մեղրիում ձյունը սակավ է լինում, եթե անգամ գալիս է մինչև երեխաները սկսում են խաղալ, հալչում է, որոշել ենք Մեղրիի բարձրադիր գոտիներում, (որտեղ ամառանոցներ

կան), երբ ձյուն տեղա, ծնողների հետ գնալ էքսկուրսիա։Եվ երեխաները կհագենան ձյունից և կծնվի մի հետաքրքիր պարապմունք լի անակնկալներով։
Մի քանի օր առաջ նորից կազմակերպեցինք մի նոր էքսկուրսիա, կրկին մշակութային այց' մանկական գրադարան, որն էլ դարձրել եմ իմ հետազոտական աշխատանքի թեման։

ԳԼՈՒԽ 1

ԷՔՍԿՈՒՐՍԻԱՆ ԵՎ ՆՐԱ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Էքսկուրսիաները մեծ դեր ու նշանակություն ունեն նախադպրոցական տարիքի երեխաների կյանքում: Էքսկուրսիան ուսումնական գործընթացի ձևերից մեկն է,ուսուցման մեթոդներից մեկը,որի միջոցով երեխաները ամրապնդում են իրենց տեսական գիտելիքները,լսածը տեսնելու,վերացականը պատկերավորմանը փոխարինելու ,պատկերացում կազմելու ,մատուցվող նյութի մասին:

Հնարավորություն է տալիս ուսուցանվող թեմայի տեսականը զուգակցել գործնականին:Ուսումնական և դաստիարակչական այս առանձնահատուկ ձևը' էքսկուրսիան հնարավորություն է տալիս բնական պայմաններում դիտարկել առարկաները և երևույթները, միաժամանակ երեխայի մոտ ակտիվացնելով մտավոր ակտիվությունն ու հուզական ոլորտը: Ամեն էքսկուրսիա անկախ թեմայից դառնում է երեխաների համար հիշարժան իրադարձություն,դուրս սովորական առօրյայից իր բազմազանությամբ, նոր տպավորություններով և հետաքրքիր մատուցված գիտելիքներով: Էքսկուրսիաների բոլոր տեսակների կիրառումը շատ կարևոր է երեխաների զարգացման համար , քանի որ դրանց համադրումը բերում է համակողմանի զարգացման :

Երեխաների ճանաչողական զարգացման ուղղությամբ աշխատանք է տարվում և' պարապմունքների ընթացքում և ' ազատ գործունեության ժամանակ, էքսկուրսիաների, մշակութային այցերի ժամանակ: Էքսկուրսիայի հիմքում ընկած է ճանաչողական (զննական) մեթոդը, որը կարևորագույն մեթոդ է:Երեխաների ճանաչողությունը տարրերային գործընթաց է, որը կապված է էմբրոգենեցիսի ամբողջ ընթացքի հետ: Էմբրոգենեզը կապված է մարմնի ընդհանուր զարգացման, նաև նյարդային համակարգի և մտավոր գործառույթի զարգացման հետ: Դա ընդհանրական զարգացման գործընթաց է, որը կապված է ճանաչողական համակարգի հետ:Ճանաչել,

նշանակում է վերափոխել, հասկանալ այդ վերափոխման գործընթացը և հետևանքը, թե հասկանալ ինչպես է այն կառուցված:
Էքսկուրսիայի ընթացքում ճանաչողությունն իրականացվում է՝ ակներև ընկալում(պատկերացում, զգայություն) երեխայի կողմից ստացված պատկերացումների հիման վրա հասկացությունների ձևավորում
ճաՆաչողությունը մտածողության մեջ իրականության արտացոլման և վերարտադրության ընթացքն է:Այդ ընթացքում անմիջական կապ է ստեղծվում շրջապատի, միջավայրի հետ:Էքսկուրսիաները ճանաչողական գիտելիքների աղբյուր են:Ուսումնական էքսկուրսիաները ուսուցման կազմակերպման լավագույն ձևերից են: Էքսկուրսիաների էությունը կայանում է ցուցադրման և բացատրման համակցության մեջ:Էքսկուրսիայի ընթացքում կիրառվում են ուսուցման բացատրական-ցուցադրական, զրույցի, գործնական և այլ մեթոդներ:Զգայությունից է սկսվում իրական աշխարհի օբյեկտիվ ճանաչողությունը: Զգայությունների միջոցով աշխարհի ընկալումը իմաստավորվում է և մշակվում է մարդու գիտակցության մեջ: Տեսողությանը միանում է մյուս զգայարանները և մտածողության գործունեությունը: Զարգացման վաղ փուլերում երեխան մտածում է ավելի շատ պատկերներով , քան հասկացություններով: Հասկացությունները հեշտ են ընկալվում, երբ ամրակայվում են փաստերով, պատկերներով: Զգայական ընկալումը հեշտացնում է երեխայի գիտելիքների յուրացման գործընթացը: Հետևաբար ուսումնադաստիարակչական գործընթացում գիտելիքի հաղորդումը ցանկալի է հաճախ կազմակերպել էքսկուրսիաների միջոցով , հաշվի առնելով , որ յուրացումը ավելի խոր և կայուն է լինում:
Էքսկուրսիաները օգնում են երեխաներին պատկերացում կազմել շրջապատող աշխարհի մասին:Էքսկուրսիաները նպատակաուղղված են նրանց կրթական, գեղագիտական, ֆիզիկական զարգացմանը:Զարգացնեւմ են երեխաների բարոյական, գեղագիտական հատկանիշներ, տալիս այնպիսի գիտելիքներ,օժտում այնպիսի ունակություններով, որոնք ձևավորում են արժեքային համակարգ: Այսպիսով էքսկուրսիաները և մշակույթային այցերը երեխայի գեղարվեստական, ստեղծագործական ու ճանաչողական մտածողության ձևավորմանը նպաստող գործունեության ձևերից են:Ինչ բնույթ էլ կրեն էքսկուրսիաներն ու մշակութային այցերը, դրանք օժտված են բարձր ազդեցությամբ և արդյունավետությամբ: Դրանք

ընդլայնում են աշխարհընկալումը, հարստացնում ճանաչողական գիտելիքները, զարգացնեում բառապաշարը, ձևավորում հետաքրքրասիրությունը, ինքնաճանաչումը,ինքնագործունեությունը, նախաձեռնողականությունը։ Դաստիարակում են սեր դեպի բնությունը, հայրենի երկիրը, դրանց տեսարժան վայրերը, հուշարձան-կոթողները, ձևավավորում են գեղագիտական ճաշակ, նպաստում են միջնանձնային հարաբերությունների ձևավորմանը:

ԳԼՈՒԽ 2

ԷՔՍԿՈՒՐՍԻԱՆԵՐԻ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՅՑԵՐԻ ԴԵՐԸ ՍԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Էքսկուրսիաները դիտվում են, որպես աշխարհաճանաչողական գիտելիքների հաղորդման միջոց։Էքսկուրսիաների և մշակութային այցերի դերը սաների զարգացման գործում հետապնդում է ուսուցման, զարգացման և դաստիարակչական նպատակներ: Կրթական գործառույթը երեխաների մոտ ձևավորում է իմացական գիտելիքներ։Էքսկուրսիաներն ու մշակութային այցերը նպաստում են աշխարհընկալմանը և ճանաչմանը։Էքսկուրսիաները զարգացնում են երեխայի բարոյական, գեղագիտական հատկանիշները։Էքսկուրսիաների նպատակն է. տալ երեխաներին գործնական գիտելիքներ, զարգացնել ունակությունները, որոնց միջոցով ձևավորվում են արժեքային համակարգ (սեր հայրենիքի , նրա պատմության, մշակույթի,արվեստի) նկատմամբ։ Ընդլայնվում է մտահորիզոնը, հետաքրքրությունները, խթանվում է նրանց ստեղծագործական ակտիվությունը,նպաստում է ինքնուրույն դատողություններ կատարել, գալ եզրահանգման:

Էքսկուրսիան նպատակաուղղված է երեխայի հոգևոր, գեղագիտական, ֆիզիկական զարգացմանը։Էքսկուրսիաների ընթացքում ստացած տեղեկատվությունը տպավորիչ է, հուզական և մնայուն, որովհետև իրականացվում է անմիջական շփման և հաղորդակցման միջոցով։ Էքսկուրսիաները մեծ նշանակություն ունեն երեխաների խոսքի զարգացման առումով , քանի որ դրանք խթանում են հաղորդակցվելու ցանկությունը, երկխոսելու ունակությունը, կապակցված խոսքը, բառապաշարը։ Էքսկուրսիաների և մշակութային այցերի ընթացքում, բառապաշարը հարստանում է, որովհետև բառը կապվում է տվյալ հասկացության , իրի, երևույթի դիտման և զննման հետ և դառնում է որոշակի:

Ռուս մեծ մանկավարժ Ուշինսկին, գտնում էր, որ խոսքը չի կարող զարգանալ առանց մտքի, իսկ միտքը զարգանում է, եթե մտքի,առարկայի մասին երեխան պարզ ու կոնկրետ պատկերացում ունի։Ոչ մի կերպ հնարավոր չէ, նոր բառերի յուրացումն այնքան կայուն դարձնել, որքան էքսկուրսիայի միջոցով:

Էքսկուրսիաները նպաստում են երեխայի բարոյական մտածողության զարգացմանը վերլուծելու, ընդհանրացնելու ունակություններ։ Զարգացնում են ստեղծագործական երևակայությունը,ճաշակը,զարգացնում են նաև շարժողական ակտիվությունը։ Դաստիարակումը գործունեության այն ձևն է,որը նպաստում է երեխայի բարոյական, հայրենասիրական դաստիարակությանը, ձևավորում հուզական վերաբերմունք շրջապատի և շրջապատում տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ։Էքսկուրսիաների ընթացքում յուրացվում են տարբեր միջավայրերում վարվելակերպի նորմեր, ձևավորվում են կարգապահություն, կազմակերպվածություն, վարքի ճիշտ դրսևորումներ տարբեր վայրերում:

Էքսկուրսիաները, որպես բնությունն ու հասարակությունը ճանաչելու, շրջապատի մասին գիտելիքներ հաղորդելու,հայրենաճանաչության, ավանդույթների ծանոթացման և պահպանման գործում մի միջոց է, որը պետք է միշտ կիրառել ուսուցման գործընթացում:

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Մշակութային այց'- մանկական գրադարան

Ավագ խումբ- տևողությունը-25-30

Պարապմունք- ԻՇԱ

Թեմա-"Հեքիաթների աշխարհում"

Տեսակը-Հեքիաթի դիտում'-" Կարմիր գլխարկը" Շառլ Պերրո

Նպատակը- Շարունակել երեխաներին սովորեցրել հասկանալ հեքիաթի բարոյախոսությունը, հասնել հեքիաթի հուզական ընկալմանը, ընդլայնել երեխայի հուզական, զգացմունքային աշխարհը, վերաբերմունք արտահայտել հերոսների արարքների հանդեպ, գնահատել հերոսների արարքները։Զարգացնել կապակցված խոսքը, հետաքրքրություն առաջացնել դեպի գեղարվեստական գրականությունը, խնամքով վարվել գրքերի հետ, ձևավորել հարգանքի զգացում գրադարանավարի աշխատանքի նկատմամբ:

Վերջնարդյունք-պատմել հեքիաթը դեպքերի զարգացման հաջորդականությամբ:

Գիտակցել գրադարանի, գրքերի դերն ու նշանակությունը:

Մանկապարտեզից դուրս, գրադարանում ընդունված վարքային կանոնների կիրառում:

Նախապատրաստում-1. "Թզուկ" տիկնիկային թատրոնի երեխաներին օգնել բեմադրելու" Կարմիր գլխարկ" հեքիաթը:

2. Պայմանավորվել մշակութի կենտրոնի տնօրենի հետ, նաև գրադարանավարի հետ, օրվա և ժամի համար:

3. Մինչ գրադարան այցելելը այնտեղ տանել աղվես- տիկնիկին, հեքիաթային, կերպարային հագուստներ(արջ, գայլ, նապաստակ), տանել գունավոր լուսարձակ,որը պետք է ապահովի հեքիաթային միջավայր :

Նախապատրաստական աշխատանքների ընթացքում անդրադարձել ենք հեքիաթներին,երեխաները շատ հեքիաթներ գիտեն, գիտեն մանկագիրների, զրուցել ենք գրադարանների մասին, բայց ոչ մի անգամ չենք այցելել գրադարան:

Ընթացքը- երեխաներին նախապես չէի տեղեկացրել,որ մանկական գրադարան ենք գնալու, որպեսզի անակնկալ լինի,հեքիաթի հերոսների և երեխաների հանդիպումը լինի իսկապես հանդիպում հեքիաթի հետ:

Առաջարկեցի գնալ մոտակա զբոսայգին դիտելու աղավնիներին։Երբ երեխաները շրջապատը մոռացած զմայլանքով դիտում էին աղավնիներին, ականջ դնում նրանց արձակած մեղմ ձայներին, հանկած հայտնվեց փոքրիկ հրաշագործը փայլուն փայտիկով։Հեքիաթից եկած հրաշագործը բարևեց երեխաներին, ծանոթացավ և առաջարկեց իր հետ գնալ հեքիաթների աշխարհ։Երեխաները համաձայնվեցին և փակեցին աչքերը, որ հայտնվեն հեքիաթային աշխարհում։Երբ բացեցին աչքերը հրաշագործը արդեն չկար,բայց մինչև անհետանալը նա թողել էր դեպի հեքիաթային աշխարհը տանող,գեղեցիկ գույներով նշված երթուղին։Առաջնորդվելով նշված երթուղով հասանք մանկական գրադարան, որը շատ մոտ էր մեր մանկապարտեզին։Այնտեղ մեզ արդեն սպասում էին հրաշագործը և աղվեսը։Աղվեսը ողջունեց երեխաներին և նրանց հրավիրեց ներս մտնել հեքիաթների կախարդական դարպասով։Հրաշագործը թափահարեց իր փայլփլուն փայտիկը և գույնզգույն լուսարձակի ցոլքերի տակ, որը իսկապես մթնոլորտը դարձրել էր հեքիաթային, ներս մտան և հայտնվեցին " Կարմիր գլխարկ" հեքիաթում։Նրանք չթուլացող հետաքրքրությամբ և ուշադրությամբ,բոցկլտացող աչքերով դիտեցին հեքիաթը, ընթացքում պատասխանելով հերոսների հարցադրումներին։Երբ գայլը ասաց, որ որսորդին չասեն, թե ինքը ուր է գնում, շարունակեց ճանապարհը և կուլ տվեց տատիկին, երեխաներից մեկը ափսոսանքով ասաց, որ պիտի տատիկին կամ որսորդին զգուշացնեին:

Այս հեքիաթը երեխաներին ծանոթ էր, բայց դիտում էին մեծ հափշտակությամբ, շունչները պահած։Նրանք դիդակտիկ նյութերի առկայությամբ լսել էին հեքիաթը, բայց հիմա տեսնում էին, դիտում, նաև ինչ- որ չափով մասնակից դառնում ներկայացմանը :Հեքիաթի ավարտին, երբ փրկվեցին և' տատիկը և' թոռնիկը փրկվեցին, նրանք անզուսպ ուրախությամբ գրկեցին հերոսներին, իսկ վիրավոր գայլին խնդրեցին հեռու մնալ տատիկից և թոռնիկից:

Հետո հեքիաթի հերոսները երեխաներին առաջնորդեցին կից սենյակ, որտեղ դարակաշարերի վրա դասավորված էին բազմաթիվ գրքեր։Նրանք զգուշությամբ դիտում էին պատկերազարդ գրքերը, խնամքով թերթում գրքերի էջերը իրար զգուշացնելով, որ հանկարծ ւպատռեն, չէ որ այնտեղ են գտնվում նրանց սիրելի հեքիաթների հերոսները։Գրքերի մեջ փնտրում էին իրենց ծանոթ հեքիաթների

հերոսներին, գուշակում էին, որ գիրքը որ հեքիաթի մասին է։Հետո շրջեցին գրադարանում, գրողների, բանաստեղծների նկարների մեջ գտան իրենց սիրելի մանկագիրներին, ուշադրությամբ լսեցին գրադարանավարուհու բացատրությունները և չզգացին թե "Կարմիր գլխարկ"- ի հերոսները երբ հեռացան։Քիչ տխրած փորձեցին գտնել և գտան տարբեր հեքիաթների հերոսների հագուստներ։Մեծ ոգևորությամբ կերպարանափոխվեցին և դարձան հեքիաթների հերոսներ։Նրանց այդ խաղը շատ դուր եկավ։Անգամ Դավիթը անմաս չմնաց գրադարանում տիրող աշխույժ եռուզեռից։Նա նույնպես ընտրեց հեքիաթային վագրի հագուստ, հագցրեցինք մեծ ցնծություն պարգևելով նրան։Ամբողջ դիտման ընթացքում նա ուրախ արձագանքում էր, ծափահարում, շոյում հերոսներին։ Երեխաները չէին ցանկանում հեռանալ գրադարանից, ցանկանում էին բոլոր գրքերը իրենց հետ տուն և մանկապարտեզ տանել, որ մենք
ամեն օր կարդանք, ցանկանում էին բոլոր տառերը շատ շուտ սովորել, որ առանց մեծահասակների օգնության կարդալ։
Հրաժեշտին նրանք աղվեսին խնդրեցին իրենց հետ վերադառնալ մանկապարտեզ։Աղվեսի հետ վերադարձանք մանկապարտեզ ամփոփելով այդ հետաքրքիր պարապմունքը։Երեխաները այնքան ոգևորված էին, որ ցանկացան աղվեսի համար նկարել, այդ օրվա տպավորությունը, իրենց զգացած այդ օրվա զգացողությունները։Նկարեցին, բայց ոչ բոլոր երեխաները և առաջարկեցին աղվեսին ընտրել ամենագեղեցիկ նկարը։Աղվեսը բոլոր նկարները գեղեցիկ համարեց և իր հետ տարավ հեքիաթների աշխարհ:
Երեխաները մինչև հիմա, ամեն առիթով պատմում են գրադարանում ապրած զգացողությունների մասին և առաջարկում են պարապմունքները գրադարան տեղափոխել։Հաճախ զարմացած հարցնում են, թե ինչու գրադարանում աղվեսը խոսում էր, ինք ուրույն շարժվում, իսկ մանկապարտեզում ես էի փոխանցում աղվեսի խոսքերը և իմ օգնությամբ էր շարժվում։Գրադարանում հուզական, զգացմունքային ֆոնը այնքան բարձր էր, որ երեխաները չճանաչեցին իմ ձայնը, չիմացան որ ես էի կերպարանավորում աղվեսին։ Համոզված են ,որ հեքիաթային աշխարհում նորից կլսեն աղվեսի ձայնը, երբ էլ որ հայտնվեն այնտեղ:

Այս այցը երեխաներին ավելի մոտեցրեց գրքին, հեքիաթներին,զարգացրեց տեսողական, խոսքային ունակությունները,հարստացրեց բառապաշարը,կապակցված խոսքը,մտածողությունը,ստեղծագործական երևակայությունը, ճանաչողությունը, ընդլայնեց զգայական աշխարհը, նոր զգացողություններ ավելացնելով։Պահպանվեց գրադարանում ընդունված վարքային կանոնները:

0:31
24 Նոյեմբեր, 2023
11:46

Պարապմունքին մասնակցեցին՝ մանկապարտեզի տնօրեն՝ Սյուզաննա Սարգսյանը
Դաստիարակներ՝ Ա. Ներսեսյան
Լ. Մելքոնյան

Տնօրեն՝Ս.Սարգսյան-Դաստիարակը մշակութային այցը պլանավորելիս խնամքով նախապատրաստվել էր՝ստեղծել էր հեքիաթային բեմադրություն,ապահովել էր կերպարային հագուստներ՝բոլոր ներկա սաների թվով։Ներկայացվեց <<Կարմիր գլխարկը>>հեքիաթը ,հեքիաթային դարպասից ներս երեխաները կերպարանափոխվում են հեքիաթային հերոսների և դիտում են ինտերակտիվ բեմադրությունը։ Դաստիարակը ապահովել էր նաև տիկնիկային հերոսների ներկայությունը,սաները անչափ տպավորված էին։Այցը գնահատում եմ գերազանց ,քանզի երեխաները նման այցերի և այլընտրանքային պարապմունքների միջոցով ավելի շատ գիտելիքներ են ձեռք բերում և ապացուցված է ,որ նման դեպքերում նրանք առավել ճիշտ դիրքորոշում են ցուցաբերում։Պարապմունք- այցի նպատակը համարում եմ հասանելի,քանզի դաստիարակը կարողացավ զարգացնել երեխաների երևակայությունը և զարկ տալ ստեղծագործական մտքի ձևավորմանը։Ձևավորող գնահատման գործիքը կիրառվեց <<Աստղաթափը>>։

Ա.Ներսեսյան- Սկզբից մինչև վերջ երեխաների հետաքրքրությունը չմարեց։Անգամ Դավիթը,որ չի կարողանում խոսել, ժեստերով, միմիկայով մասնակցում էր բեմադրության դիտմանը։Նրա աչքերը ոգևորություն և ցնծություն էր արտահայտում։Զգացվում էր,որ որոշ չափով,գուցե ոչ խորությամբ ընկալում էր հեքիաթի բովանդակությունը։ Այցը ուսուցողական էր, արդյունավետ։Երեխաները իրենց հետ շատ բան տարան...

Լ . Մելքոնյան

Երեխաները ապրեցին հրաշաքի հայտնության բերկրանք։Ակտիվ էին, նախադասությունները կապակցված էին։Այսպիսի այցերը կարևոր դեր և նշանակություն ունեն երեխաների զարգացման գործում։Երեխաները ավելի ընկալունակ են դառնում, ավելի ազատ են դառնում,ազատ են արտահայտում իրենց մտքերը, միասին ապրումակցում են և այդ զգացումը ավելի է մտերմացնում երեխաներին:

Կարծում եմ,որ պարապմունքին հասա այն արդյունքին, որին ակնկալում էի:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Էքսկուրսիաների և մշակութային այցերի դերը սաների զարգացման գործում" թեմայի ուսումնասիրությունը թույլ տվեց հանգելու հետևյալ եզրակացության ,որ էքսկուրսիաների և մշակութային այցերի դերը անփոխարինելի է երեխաների զարգացման գործում։Համոզվեցի, որ երեխաների հետ տարբեր վայրերում աշխատելը ավելի հետաքրքիր է և արդյունավետ, նաև կարևոր։Մինչ հետազոտական աշխատանքը կարևորել եմ էքսկուրսիաների և մշակութային այցերի դերը, դրա համար էլ ընդամենը մեկ եռամսյակում' առաջին եռամսյակում իրագործել եմ այդքան բազմաբնույթ էքսկուրսիաներ և մշակութային այցեր։Ճիշտ է, այնքան էլ դյուրին չի կազմակերպել այդքան էքսկուրսիաներ բայց արդյունքը այնպես ոգևորող է, որ մոռացնել է տալիս այդ ողջ գործընթացի շատ աշխատանք պահանջող նախապատրաստությունը։ Աշխատելով հետազոտական թեմայի շուրջ ավելի խորությամբ, ավելի համոզվեցի ,որ և' կրթական և' դաստիարակում և' զարգացման գործունեության ձևերում բաց տեղ չի մնում, եթե օգտագործում են բոլոր հնարավորությունները ուսումնական գործընթացում կիրառելով էքսկուրսիաները և մշակութային այցերը։Էքսկուրսիաների և մշակութային այցերի ընթացքում ինքնուրույնության դրսևորումները ակտիվացնում են երեխայի զարգացման գործընթացը, մղում ինքնուրույնության, իսկ երեխայի ինքնուրույնությունը նրա զարգացման և անձնավորության ձևավորման կարևոր գործոն է։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1.Լ.Ասատրյան,Գ.Հակոբյան <<Մանկավարժություն>> Երևան 2007թ.

2.<<Նախաշավիղ>> գիտամեթոդական հանդես 2015 թ.

3. Գյուլամիրյան <<Խոսքի զարգացում>> Զանգակ.

4.Լ.Սմբատյան ,Լ.Վերդյան, Հ.Մինասյան <<Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր>>:

5.wikipedia.org